ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿՈՒՐԹԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
գ. Կուրթան , Հեռ. (0256)6-19-99
«14» հունիսի 2017թ. թիվ 97

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան
Կից ուղարկում ենք Կուրթան համայնքի ավագանու 2017թ. հունիսի 08-ի թիվ 06 նիստի թիվ 19-22որոշումները:
Առդիր 5թերթ:

Համայնքի ղեկավար /Ա.Գևորգյան/

ԿՈՒՐԹԱՆ
06400981

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Կուրթան, (0256) 61999, kurtan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 19

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետը՝ Կուրթան համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Կուրթան համայնքի ավագանու 2017թ. հունիսի 08-ի թիվ 06 նիստի օրակար-գը՝
1.Կուրթանի նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2.Կուրթան համայնքի 2017թ. տարեկան գյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Համայնքային սեփականություն համարվող գույքը <<Լոռի-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին նվիրաբերելու մասին:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Դանիելյան Գարիկ
Դավթյան Վահե
Դարբինյան Էդգար
Հարությունյան Հմայակ
Մազթաղյան Գնել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Կուրթան, (0256) 61999, kurtan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 20

### ԿՈՒՐԹԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետով, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Կուրթանի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել Կուրթան համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 18-ի <<Կուրթանի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ45 որոշումը:
3.Որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. հուլիսի 01-ից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Դանիելյան Գարիկ
Դավթյան Վահե
Դարբինյան Էդգար
Հարությունյան Հմայակ
Մազթաղյան Գնել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
Կուրթան համայնքի ավագանու
2017թ. հունիսի 08-ի N 20 որոշման

Կուրթան համայնքի մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը` 11:
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորների քանակը | Պաշտոնական դրույքաչափը /հազար դրամ/ |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 111,0 |
| Դաստիարակ | 2 | 110,0 |
| Երաժիշտ դաս-տիարակ | 0,75 | 110,0 |
| Դայակ, դաստիա-րակի օգնական | 2 | 72,752 |
| Խոհարար | 1 | 72,752 |
| հաշվապահ | 1 | 77,91 |
| բակապահ | 1 | 72,752 |
| բուժքույր | 1 | 77,91 |

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար` _______________ /Թամարա Գրիգորյան/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Կուրթան, (0256) 61999, kurtan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 21

## ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, Կուրթան համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել 2017թ. տարեկան բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները.
Կառավարման ապարատ նախահաշվի 4221 հոդվածում ավելացնել 90000/իննսուն հազար/ դրամ, 4232 հոդվածում պակասացնել 28000 /քսանութ հազար/ դրամ, 4251 հոդվածում պակասացնել 90000/ինը հարյուր հազար/ դրամ, 5121 հոդվածում պակասացնել 170351/մեկ հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր հիսունմեկ/ դրամ, 5122 հոդվածում պակասացնել 400000/չորս հարյուր հազար/ դրամ, փողոցային լուսավորություն նախահաշվի 5112 հոդվածում ավելացնել 530351/հինգ հարյուր երեսուն հազար երեք հարյուր հիսունմեկ/ դրամ, 4241 հոդվածում ավելացնել 40000/քառասուն հազար/ դրամ, հեռուստահաղորդումներ նախահաշվի 4234 հոդվածում պակասացնել 5000 /հինգ հազար/ դրամ, նախադպրոցական կրթություն նախահաշվի 4637 հոդվածում ավելացնել 974000/ինը հարյուր յոթանասունչորս հազար/ դրամ, ճանապարհային տրանսպորտ նախահաշվի 4251 հոդվածում ավելացնել 1100000/մեկ միլիոն մեկ հարյուր հազար/ դրամ, 5134 հոդվածում ավելացնել 40000/քառասուն հազար/ դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածում պակասացնել 1244000/ մեկ միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար/ դրամ:

Կողմ -5 | Դեմ -0 | Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԵ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ԷԴԳԱՐ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ
5. ՄԱԳԹԱՂՅԱՆ ԳՆԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ... 06400981

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Կուրթան, (0256) 6 19 99, kurtan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2017թվականի N 22 -Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ,,ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ,, ՓԲԸ-ԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 594-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով ՀՀ կառավարության նիստի 28.04.2016թ-ի թիվ 16 արձանագրությունը՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Կուրթան համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-057-0123-0045 ծածկագրի 0,1405հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտնվող 12 փողոց 3-րդ նրբանցք թիվ 16/1 հասցեի ՕԿՋ-ն նվիրաբերել ,,Լոռի-ջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3. Առաջարկել Կուրթան համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության և համայնքի միջև կնքել գույքի նվիրատվության մասին պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Դանիելյան Գարիկ
2. Դավթյան Վահե
3. Դարբինյան Էդգար
4. Հարությունյան Համայակ
5. Մագթաղյան Գնել

**Համայնքի ղեկավար** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ԿՈՒՐԹԱՆ ... 06406981